

ուանց Երկիրը պարարտացունելու այլ սերմը միայն պարարտացունելով հասուցեր էին, երկրագործաց մտադրութեան մեծ նիւթ եղան :

Ինչիւղներուն ոյժը, ու հասկերուն երկայնութիւնն ու հարստութիւնը, ցորենին լեցունութիւնը զամենքն ալ զարմացուցին։ Տիւսոյք մէկ խարձէն 30, 40 հասկ առին. և մէկ ցորենահատ մը 80 հատ տուաւ, որոնց ծզօտներն հաստ, փայլուն ու գեղեցիկ էին :

Անդ-Աւան ըսուած տեղը 1848-49<sup>են</sup> եղած փորձերէն կ'իմացուի որ 117 լիտր ցորեն սերմը 41 հարիւրալիտր ու 17 լիտր տուեր է. այսինքն՝ սերմէն երեսուն ու հինգ անգամ աւելի :

1849-50<sup>են</sup> Գաղղիոյ 27 գաւառներու մէջ գրեթէ 100 հեկտար երկիրցանուեցաւ այս կերպով, և կը հաստատեն թէ ամէն տեղ ալ հունձքը շատ յաջող գընաց, ինչպէս որ կը յուսացուեր, և շատ տեղ մէկը երեսուն տուեր է. ուր առաջ որչափ ալ աշխատէին ու երկիրը պարարտացունեին, մէկը եօթնէն աւելի չէր բերեր :

Անգ հեկտար երկրի մէջ ցանելու սերման այս պարարտութենէն կարաս մը բաւական է, որ կարասով հանդերձ 33 ֆրանք կ'արժէ. իսկ հին կերպով մէկ հեկտար երկիրը պարարտացունելու համար Գաղղիոյ մէջ 200 ֆրանք չի բաւեր. հիմայ տես թէ ուր է 33<sup>բ</sup>, ուր 200<sup>բ</sup>, հազար ուր թողունք որ 33<sup>բ</sup> մէկին 30 կու տայ, ու 200<sup>բ</sup> մէկին հազիւ թէ եօթը :

Այս ըսածներէս յայտնապէս կը տեսնենք որ ցորենեղինաց սերմանիքը այս կերպով պարարտացունելով՝ սովորականէն քառապատիկ աւելի բերք կը բերէ, և պարարտութեան ծախիքն ալ առաջնէն վեց եօթն անգամ նուազէ :

Այս կ'իմացուի որ այս ալ մեր դարուս առաջին օգտակար գիւտերէն մէկն է, վասն զի թէ որ ճշմարիտ է այն տնտեսական առածը, որուն ստուգութիւնը տարակոյս չի վերցուներ, թէ երկրի մը բնակիցքը այնչափ կրնան ածիլ որչափ որ նոյն երկիրը զամոնք մնուցանելու մի-

ջոցներն ունենայ, ուրեմն կը հետեւի թէ այս կերպով երկրագնտիս քառապատիկ բնակիցքն ալ կրնան մնանիլ. որով երեւելոյն Ոլթհրսի հետեղաց երկիւղն ալ կը փարատի :

Անչ ալ ըլլայ, շատ փափագելի բան է որ օր մը առաջ այս պարարտութեան բաղադրութիւնը ծանուցուի, և որով հետեւ Գաղղիացոյ ազգը իրեւ առատաձեռն կը պարծի, երանի թէ ժամ մը առաջ առատապէս վարձատրեր այս գիւտիս հեղինակը և ընծայեր աշխարհի նոյն գիւտը, հրատարակելով զայն վասն բարւոյ հասարակաց :

#### ՊԱՐՏԻՉԱԳԱՆՈՒԹԻՒՆ

Ուժիութեան պարտիշտանութեան էջ գործածութիւնը :

Վաւսւ որ մագնիսականութիւնը արուեստից ու առանին տնտեսութեան մէջ օգտակար կերպով չի գործածուիր, միշտ իրեն հակառակորդներ պիտի չի պակսին. և միայն այն ատեն ամենայն հակառակութիւնք կը դադարին, երբոր անտարակումելի փորձերով իրեն օգտակարութիւնը ամենուն յայտնի կ'ընէ : Աւստի այս նպատակիս հասնելու համար պէտք է՝ ոչ եթէ մարդուս արտաքին զգացմանցը վրայ թմբութիւն ձգէ, այլ հասարակաց կարծիքը իրեն նպաստ առնու և իւր անժխտելի օգտակարութեամբը մարդուս մուացը վրայ ազգէ : Եթերայ թէ Գաղղիացիք, որ մինչեւ այսօրս մագնիսութեան գլխաւոր ախոյեաններն եղան, անոր զօրութեանը օգտակար կերպով գործածուելուն հընարքն ալ պիտի վայելեն. և այս բանիս փորձ հետեւալնամակն ըլլայ, որ Փիքար անունով գաղղիացի բժիշկ մը Փարիզու մեսմերականութեան ժողովոյն կը զրէ :

“ Այս տարի ասրիլի Տեղ վեց այլ և այլ տեսակ վարդ Ճեղքելով վեց ան, տառային վարդերու վրայ պատուաս-

„ տեցի , որոնք գեղեցիկ և ուժով էին :  
 „ Ասոնք պատուաստելուս ատեն ամէնն  
 „ ալ մի և նոյն աստիճանի մէջ էին , և  
 „ զասոնք դիւրին կերպով կրցայ գտնել ,  
 „ վասն զի անցած հոկտեմբերի հազար  
 „ հինգ հարիւր հատ անկեր էի : Ի՞ս  
 „ վեց վարդերէն հինգը թողի որ եր-  
 „ թան սովորական կերպով աձին , վեցե-  
 „ բորդը մագնիսացուցի , որ թագուհու-  
 „ վարդ ըսուածէն էր , ամէն օր հինգ  
 „ վայրկենի միջոց՝ իրիկուն առաւօտ :  
 „ Երկն ամսոյն 10<sup>th</sup> երկու ընձիւղ ար-  
 „ ձակեց , որ մէկ հարիւրորդամեղը եր-  
 „ կայնութիւն ունէին , մէկալ հինգը  
 „ 20<sup>th</sup> հազիւ թէ ծլելու նշան սկսան  
 „ տալ :

„ Ույիսի 10<sup>th</sup> մագնիսացեալ պա-  
 „ տուաստ 40 հարիւրորդամեղը եր-  
 „ կայնութեամբ ընձիւղներ արձակեր-  
 „ էր , վեց ծաղկի պտկոնք տուած , ուր  
 „ մէկալները հազիւ թէ 5<sup>th</sup> մինչև 10  
 „ հարիւրորդամեղը բարձրացեր էին , և  
 „ վրանին և ոչ ծաղկի աչք մը կը տես-  
 „ նուէր :

„ Ույիսի 20<sup>th</sup> տեսայ որ մագնիսա-  
 „ ցեալ պատուաստ որ տասը հատ գե-  
 „ ղեցիկ վարդ տուեր էր , մէկալոնց  
 „ կրկին բարձրութիւնն ունի : Ծաղկը-  
 „ ները փրցունելին ետեւ , բատ ժամա-  
 „ նակին կտրատեցի և սկսաւ նորէն ա-  
 „ շիլ և այնպէս ուժավ՝ որ յուլիսի մէջ  
 „ 42 հարիւրորդամեղը բարձրութիւն  
 „ ունէր , և դարձեալ ուժը վարդ  
 „ տուաւ :

„ Խրորդ անգամ յօտելով՝ գեղե-  
 „ ցիկ բուն մը ձեւացաւ տասուերկու  
 „ ծաղկաւէտ ձիւղերով՝ խրաբանցիւրը  
 „ 64 հարիւրորդամեղը բարձրութիւր :  
 „ Եւ այսպէս այս պատուաստէս 18  
 „ ծաղկի տոի , որ երրորդ անգամ փըր-  
 „ յունելուս ատեն կտրտած ձիւղերէն  
 „ 38 աչք հանեցի հանգերձ կտոր մը  
 „ վրայի կեղեռվը և ուրիշներու վրայ  
 „ դըր , որ քանի մը շաբաթ է որ ծաղկի  
 „ տուին : Ո՞նացած հինգը որ չի մագնի-  
 „ սացուցի յունիսի վերջերը ծաղկեցան  
 „ և իրենց ձիւղերը հազիւ թէ 15<sup>th</sup>  
 „ մինչև 20 հարիւրորդամեղը երկայ-

„ նութիւն ունէին , և մէկը միայն 20  
 „ հարիւրորդամեղը բարձրացեր էր :  
 „ Ուրիշատ փորձեր ալըրի , նաև կա-  
 „ մաւ փորձերուս կանոնաւորութիւնն  
 „ ալ ընդմիջելով , և միշտ տեսայ որ  
 „ մակնիսական հեղուկը որուն վրայ որ  
 „ կ'ազդէր՝ ուրիշներէն շատ շուտ կը  
 „ ծլէին ու կը ծաղկէին :

„ Ու երջապէս ուղեցի ալ առաջ եր-  
 „ թալ , և իմանալ թէ կրնամ արգեօք  
 „ բուսոյ մը մէկ մասին վրայ միայն ազ-  
 „ դեցութիւն տալ : Ի՞ս բանիս համար  
 „ գեղձենւոյ մը մէջ տեղի ձիւղն ըն-  
 „ տրեցի որ վրան իրեք հատ պտուղ ու-  
 „ նէր : Ի՞մէն օր այս ձիւղը հինգ վայր-  
 „ կեան կը մագնիսացունէի , և քանի  
 „ մը օրէն ետեւ տեսնեմ որ այն իրեք  
 „ գեղձը զգալապէս օր օրուան վրայ կը  
 „ մեծնան : Մագնիսացումն շարունա-  
 „ կեցի և օգոստոսի 24<sup>th</sup> գեղձերը փըր-  
 „ յուցի որ լաւ հասեր էին : Ի՞սոնց շըր-  
 „ ջապատը չափեցի տեսայ որ 24 , 22  
 „ և 21 հարիւրորդամեղը էր , որ այս  
 „ տեսակ գեղձը մեր կողմերը այս մե-  
 „ ծութեան չի հասնիր . այս ձիւղին  
 „ տերեւները մեկալներէն աւելի խիտ  
 „ հիւսուածք մը ունէին և վրայի ջղերն  
 „ ալ կրկին հաստութեամբ էին : Ծա-  
 „ ռին միւս ձիւղերուն պառուղը սովո-  
 „ րական տաենին կը հասնի , այսինքն  
 „ սեպտեմբերի 20<sup>th</sup> կամ 23<sup>th</sup> , որ 14  
 „ ու 15 հարիւրորդամեղը շրջապատ  
 „ կ'ունենայ :

„ Հազարն այս է , գուք տուեք առոնց  
 „ մէկնութիւնը .. :

Թոյլ ազգ մը մեռած ազգ մըն է , մէկ ազգ մը  
 որ իւր մասամունքները ուրիշներէն կ'առնու՝ եղ-  
 ձեալ ազգ մըն է :

ՊՈԴԴԱ

Ընկերութեան մէջ երկու կարդ մարդկանց կայ .  
 բժիշկներն ու խոհարարները , որոնցմէ առաջին .  
 ները անդադար կ'աշխատին մեր տռութութիւնը  
 պահպանելու . մէկալոնք՝ եղծանելու , այս տար-  
 բերութեամբ որ ետքններս աւելի ապահով են  
 իրենց ըրածին վրայ , քան թէ առաջինները :

ՏԵՏՐՈՅ